ԱՄՆ Բնակարանային Շինարարության և Քաղաքային Զարգացման Նախարարություն (HUD)
OMB Հաստատում թիվ. 2577-0286
Վավերական է մինչև՝ 06/30/2017

[Մուտքագրե՛ք Բնակարանային Ապահովման Մատակարարի Անունը[1]]

Վարձակալության Իրավունքների Ծանուցում Կանանց նկատմամբ Բռնության մասին Օրենքի (VAWA) շրջանակում[2]

Բոլոր Բնակիչներին և Դիմորդներին՝

Կանանց նկատմամբ Բռնության մասին Օրենքն (Violence Against Women Act (VAWA)) ապահովում է ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման զոհերի պաշտպանությունը: VAWA-ի շրջանակներում պաշտպանության ապահովումը հասանելի է ոչ միայն կանանց, այլ հավասարապես հասանելի է բոլոր անհատներին անկախ նրանց սեռից, սեռային գենդերային ինքնությունից կամ սեռական կողմնորոշումից:[3] ԱՄՆ Բնակարանային Շինարարության և Քաղաքային Զարգացման Նախարարությունը (U.S. Department of Housing and Urban Development (HUD)) ԱՄՆ Դաշնային գործակալություն է, որը

[1] Բնակարանային ապահովման մատակարարի (housing provider) համար ծանուցման մեջ օգտագործվում է HP հապավումը, սակայն որտեղ նշված է HP՝ մատակարարը պետք է մուտքագրի իր անունը: HUD-ի ծրագրի շրջանակում հատկանշական կանոնակարգերը սահմանում են վարձակալության իրավունքների ծանուցումը տրամադրելու համար պատասխանատու անհատի կամ իրավաբանական անձի ինքնության հաստատումը:

[2] Չնայած այդ օրենքի անվանմանը, VAWA-ի շրջանակներում պաշտպանության ապահովումը հասանելի է՝ անկախ սեռից, սեռային (գենդերային) ինքնությունից կամ սեռական կողմնորոշումից:

[3] Բնակարանային ապահովման մատակարարները չեն կարող խտրականություն սահմանել պաշտպանված բնութագրերի որևիցե մեկի հիմքով, այդ թվում են՝ ռասայական պատկանելիությունը, մաշկի գույնը, ազգային ծագումը, կրոնը, սեռը, ընտանեկան կարգավիճակը, հաշմանդամությունը կամ տարիքը: HUD-ի կողմից աջակցվող և HUD-ի կողմից տրամադրվող բնակարանային ապահովումը պետք է հասանելի լինի բոլորին՝ այլապես իրավասու անձանց, անկախ նրանց իրական կամ ընկալվող սեռական կողմնորոշումից, սեռային (գենդերային) ինքնությունից կամ ամուսնական կարգավիճակից:

նախատեսում է, **[մուտքագրե՛ք ծրագրի կամ վարձակալության աջակցության անվանումը]**-ի համապատասխանությունը VAWA պահանջներին: Տվյալ ծանուցումը բացատրում է VAWA-ի շրջանակներում Ձեր իրավունքները: HUD -ի կողմից հաստատված հավաստագրման ձևաթուղթը կցված է սույն ծանուցմանը: Դուք կարող եք լրացնել տվյալ ձևաթուղթը, որպեսզի ցույց տաք, որ Դուք հանդիսացել եք ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման զոհ, և որ Դուք ցանկանում եք օգտվել Ձեր իրավունքներից VAWA-ի շրջանակներում:

Պաշտպանություն Դիմորդների համար՝

Եթե Դուք այլապես ունեք աջակցության իրավասություն **[մուտքագրե՛ք ծրագրի կամ վարձակալության աջակցության անվանումը]** շրջանակներում, ապա Դուք չպետք է ընդունելության կամ աջակցության մերժում ստանաք՝ ելնելով այն հանգամանքից, որ Դուք հանդիսանում կամ հանդիսացել եք ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման զոհ:

Պաշտպանություն Բնակիչների համար՝

Եթե Դուք աջակցություն եք ստանում **[մուտքագրե՛ք ծրագրի կամ վարձակալության աջակցության անվանումը]** շրջանակներում, ապա Դուք չպետք է աջակցության մերժում ստանաք, Ձեր մասնակցությունը չի կարող դադարեցվել կամ, Դուք չեք կարող վտարվել Ձեր վարձակալված բնակարանից՝ ելնելով այն հանգամանքից, որ

Դուք հանդիսանում կամ հանդիսացել եք ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման զոհ:

Ինչպես նաև, եթե Դուք կամ Ձեզ հետ փոխկապակցված որևէ անձ հանդիսացել եք/է ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման զոհ՝ Ձեր իսկ տնային տնտեսության անդամի կամ որևէ հյուրի կողմից, Ձեզ չպետք է մերժեն վարձակալության աջակցությունը կամ վարձակալության իրավունքներից օգտվելը **[մուտքագրե՛ք ծրագրի կամ վարձակալության աջակցության անվանումը]** շրջանակներում, միմիայն հանցավոր գործողությունների հիմունքով, որոնք անմիջականորեն առնչվում են ընտանեկան բռնությանը, ժամադրության ընթացքում բռնությանը, բռնաբարությանը կամ հետապնդմանը:

Փոխկապակցված անձ նշանակում է՝ Ձեր ամուսինը (կենակիցը), ծնողը, եղբայրը, քույրը կամ երեխան, կամ այն անձը, ում համար Դուք հանդես եք գալիս որպես ծնող կամ խնամակալ (օրինակ փոխկապակցված անձը գտնվում է Ձեր խնամքի, խնամակալության կամ վերահսկողության տակ), կամ Ձեր տնային տնտեսությունում բնակվող որևէ անձ, բնակիչ, կամ օրինական վարձակալ:

Չարաշահողի կամ Հանցագործի Վտարումը Տնային Տնտեսությունից՝

HP կարող է տարանջատել (երկու մասի բաժանել) Ձեր վարձակալությունը, որպեսզի վտարի կամ դադարեցնի իր աջակցությունն այն անձի նկատմամբ, ով ներգրավված է ընտանեկան բռնությանը, ժամադրության ընթացքում բռնությանը, բռնաբարությանը

կամ հետապնդմանն անմիջականորեն առնչվող հանցագործ գործողություններում (չարաշահող կամ հանցագործ):

Եթե HP-ն ընտրում է չարաշահողի կամ հանցագործի վտարումը, ապա HP-ն չի կարող իրավասու բնակիչներին զրկել բնակության վայրի հանդեպ իրենց իրավունքներից, կամ որևէ այլ կերպով պատժել մնացած բնակիչներին: Եթե վտարված չարաշահողը կամ հանցագործը հանդիսանում է տան միակ բնակիչը, ով ծրագրի շրջանակներում ունի աջակցության հաստատված իրավասություն, ապա HP-ն պետք է թույլատրի բռնության զոհին կամ տնային տնտեսության այլ անդամներին մնալ այդ բնակության վայրում որոշ ժամանակահատվածի ընթացքում՝ տվյալ ծրագրի շրջանակներում կամ VAWA պաշտպանության ներքո՝ մեկ այլ HUD բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում իրավասություն հաստատելու կամ այլընտրանքային բնակարանային պայմաններ գտնելու նպատակով:

Չարաշահողին կամ հանցագործին վտարելիս՝ HP-ն պետք է առաջնորդվի Դաշնային, Նահանգային և տեղական մակարդակներով գործող վտարման ընթացակարգերով: Վարձակալությունը բաժանելու համար HP-ն կարող է, սակայն պարտադրված չէ Ձեզանից խնդրել ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման դեպքերին վերաբերող փաստաթղթեր կամ հավաստագրում:

Տեղափոխություն մեկ այլ Բնակարանային Միավոր՝

Ձեր խնդրանքով HP-ն կարող է թույլատրել, որպեսզի Դուք մեկ այլ միավոր տեղափոխվեք՝ այլ միավորների հասանելի լինելու պայմաններում, և դեռևս պահպանեք Ձեր աջակցությունը: Հայցադիմումը հաստատելու նպատակով HP-ն կարող է խնդրել Ձեզ տրամադրել փաստաթղթեր, որոնք կվկայեն, որ Դուք տեղափոխություն եք խնդրում ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման դեպքերի հետևանքով: Եթե այդ խնդրանքն անհապաղ (արտակարգ իրավիճակում) տեղափոխության խնդրանք է, ապա բնակարանային ապահովման մատակարարը կարող է խնդրել Ձեզ, որպեսզի գրավոր հայցադիմում ներկայացնեք կամ ձևաթուղթ լրացնեք, որտեղ Դուք կհավաստեք, որ Դուք համապատասխանում եք VAWA պահանջների ներքո անհապաղ (արտակարգ իրավիճակում) տեղափոխության չափանիշներին: Այդ չափանիշները հետևյալն են.

(1) Դուք հանդիսանում եք ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման զոհ: Եթե Ձեր բնակարանային ապահովման մատակարարը դեռևս չունի այն փաստաթղթերը, որոնց համաձայն Դուք հանդիսանում եք ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման զոհ, ապա Ձեր բնակարանային ապահովման մատակարարը կարող է խնդրել, որպեսզի Դուք ներկայացնեք նման փաստաթղթեր՝ ինչպես նկարագրված է ստորև փաստաթղթերի ներկայացման հատվածում:

(2) Դուք հստակորեն խնդրել եք անհապաղ (արտակարգ իրավիճակում) տեղափոխություն: Ձեր բնակարանային ապահովման մատակարարը կարող է պահանջել, որպեսզի Դուք ներկայացնեք ձևաթուղթ կամ կարող է ընդունել որևէ այլ գրավոր կամ բանավոր հայցադիմում:

(3) Դուք խոհեմաբար հավատում եք, որ Ձեզ սպառնում է անխուսափելի վնաս հետագա բռնության գործողություններից, եթե Դուք մնաք Ձեր ներկայիս տեղակայման վայրում: Դա նշանակում է, որ Դուք վախենալու պատճառներ ունեք, որ եթե Ձեզ չտրամադրվի տեղափոխություն, ապա Դուք բռնության կենթարկվեք շատ մոտ ապագայում:

ԿԱՄ

Դուք հանդիսանում եք բռնաբարության զոհ, և այդ դեպքը տեղի է ունեցել Ձեր տեղակայման վայրում 90 օրացուցային օրվա ընթացքում՝ մինչև Դուք տեղափոխություն եք խնդրել: Եթե Դուք հանդիսանում եք բռնաբարության զոհ, ապա ի լրումն անհապաղ (արտակարգ իրավիճակում) տեղափոխության իրավասությանը՝ այն պատճառաբանությամբ, որ Դուք խոհեմաբար հավատում եք, որ Ձեզ սպառնում է անխուսափելի վնաս հետագա բռնության գործողություններից, եթե Դուք մնաք Ձեր ներկայիս տեղակայման վայրում, Դուք կարող եք նաև անհապաղ (արտակարգ իրավիճակում) տեղափոխության իրավասություն ունենալ, եթե բռնության գործողությունը տեղի է ունեցել այն անշարժ գույքի տարածքում, որից որ Դուք Ձեր տեղափոխությունն ենք խնդրել և որ այդ բռնությունը տեղի

է ունեցել 90 օրացուցային օրվա ընթացքում՝ մինչև Դուք հստակորեն արտահայտել եք Ձեր տեղափոխության պահանջը:

HP-ն գատնի կպահի ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման զոհերից ստացված անհապաղ (արտակարգ իրավիճակում) տեղափոխության հայցադիմումները, և նման զոհերի ու նրանց ընտանիքների ցանկացած տեղափոխման վայրի մասին տեղեկությունները: HP-ների արտակարգ իրավիճակում տեղափոխության ծրագիրը տրամադրում է մանրամասն տեղեկատվություն արտակարգ տեղափոխությունների վերաբերյալ, և HP-ն պետք է Ձեզ համար հասանելի դարձնի իր արտակարգ իրավիճակում տեղափոխության ծրագրի կրկնօրինակը, եթե Դուք ցանկանաք տեսնել այն:

Ընտանեկան Բռնության, Ձամադրության Ընթացքում Բռնության, Բռնաբարության կամ Հետապնդման Զոհ Հանդիսանալու Փաստաթղթերի Ձևակերպումը՝

HP-ն կարող է, բայց պարտադրված չէ խնդրել Ձեզ, որպեսզի փաստաթղթեր տրամադրեք «հավաստելու», որ Դուք հանդիսանում կամ հանդիսացել եք ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման զոհ: HP-ի նման պահանջը պետք է լինի գրավոր, և HP-ն պետք է Ձեզ տրամադրի առնվազն 14 աշխատանքային օր (բացի՝ կիրակի և շաբաթ օրերից, և Դաշնային տոներից)՝ սկսած այն օրվանից, երբ Դուք ստանաք փաստաթղթերը ներկայացնելու ծանուցումը: HP-ն կարող է, սակայն պարտադրված չէ, երկարացնել փաստաթղթերը ներկայացնելու ժամանակահատվածը՝ Ձեր խնդրանքի հիման վրա:

Դուք կարող եք որպես փաստաթուղթ HP-ին ներկայացնել ստորև նկարագրվածներից որևէ մեկը: Դա Ձեր ընտրությունն է, թե ստորև նշվածներից որն եք ներկայացնելու, եթե HP-ն Ձեզ խնդրի փաստաթղթեր ներկայացնել առ այն, որ Դուք հանդիսանում կամ հանդիսացել եք ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման զոհ:

- HUD-ի կողմից հաստատված լրացված հավաստագրման ձևաթուղթ, որը տվյալ ծանուցման հետ Ձեզ է տրամադրվել HP-ի կողմից, որը փաստարկում է ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման դեպքը: Ձևաթղթում կհարցվի Ձեր անունը, ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման դեպքի կատարման ամսաթիվը, ժամը և վայրը, և միջադեպի նկարագրությունը: Հավաստագրման ձևաթուղթը նախատեսում է նաև չարաշահողի կամ հանցագործի անվան նշումը, եթե չարաշահողի կամ հանցագործի անունը հայտնի է, և դրա տրամադրումը անվտանգ է:
- Ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման դեպքի փաստաթղթային ձևակերպումը կատարող Դաշնային, Նահանգային, ցեղային, տարածքային կամ տեղամասային օրենսդրական գրասենյակի, դատարանի կամ վարչարարական գործակալության կողմից կատարված գրանցում: Նման

գրանցումների օրինակների թվում են ոստիկանության զեկույցները, պաշտպանական դատական հրահանգը և դատական արգելքները:

- Հայտարարագիր, որը Դուք պետք է ստորագրեք գործատուի, գործակալի, կամ զոհի ծառայության մատակարարողի կամավորի, իրավաբանի կամ բժշկական մասնագետի, կամ մտավոր առողջության մասնագետի (հավաքականորեն «մասնագետ») հետ մեկտեղ, որից Դուք աջակցություն եք խնդրել ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման դեպքը կամ դաժան վերաբերմունքի հետևանքները հասցեավորելու նպատակով, ինչպես նաև Ձեր կողմից ընտրված մասնագետի հետ միասին, որը երդմնազանցության համար պատժի ենթարկվելու պայմանով, վկայություն է տալիս առ այն, որ նա համոզված է, որ ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման միջադեպը հիմք է հանդիսանում պաշտպանության համար:
- Որևէ այլ հայտարարություն կամ վկայություն, որը HP-ն համաձայնել է ընդունել:

Եթե Ձեզ չի հաջողվում, կամ Դուք հրաժարվում եք վերը նշված փաստաթղթերից որևէ մեկը տրամադրել 14 աշխատանքային օրվա ընթացքում, ապա HP-ն պարտավորված չէ ապահովելու Ձեզ տվյալ ծանուցման մեջ նշված պաշտպանությամբ:

Եթե HP-ն ստանում է հակասական վկայություն այն մասին, որ կատարվել է ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ

հետապնդման միջադեպ (ինչպես օրինակ, հավաստագրման ձևաթղթեր տնային տնտեսության երկու կամ ավելի անդամներից, որոնցից յուրաքանչյուրը պնդում է, որ հանդիսանում է զոհ, և որպես չարաշահող կամ հանցագործ անվանում մյուս հայցադիմումը ներկայացնող տնային տնտեսության երկու կամ ավելի անդամների), ապա HP-ն իրավունք ունի պահանջելու, որպեսզի Դուք 30 օրացուցային օրվա ընթացքում ներկայացնեք երրորդ կողմի փաստաթղթային հիմնավորումը՝ հակասությունը լուծելու նպատակով: Եթե Ձեզ չի հաջողվում, կամ Դուք հրաժարվում եք տրամադրել հակասական վկայություն պարունակող երրորդ կողմի փաստաթղթերը, ապա HP-ն պարտավորված չէ ապահովելու Ձեզ տվյալ ծանուցման մեջ նշված պաշտպանությամբ:

Գաղտնիություն՝

HP–ն պետք է գաղտնի պահի ցանկացած տեղեկատվություն, որը Դուք տրամադրում եք VAWA շրջանակներում Ձեր իրավունքները կիրառելու վերաբերյալ, այդ թվում՝ այն փաստը, որ Դուք օգտվում եք VAWA շրջանակներում Ձեր իրավունքներից: HP–ն չպետք է թույլատրի, որ HP–ի անունից աջակցություն կամ այլ ծառայություններ կառավարող որևէ անձ (օրինակ՝ աշխատակիցները և կապալառուները) հասանելիություն ունենան գաղտնի տեղեկատվությանը՝ բացառությամբ այն հանգամանքների, որոնցից հատկապես բխում է, որ տվյալ անհատները պետք է հասանելիություն ունենան այդ տեղեկատվությանը՝ ելնելով կիրառելի Դաշնային, նահանգային և տեղական օրենքների պահանջներից:

HP–ն չպետք է Ձեր տեղեկատվությունը մուտքագրի տվյալների փոխանակում ենթադրող որևէ տվյալների հիմք/BASE-ԲԱԶԱ կամ բացահայտի այն որևէ երրորդ իրավաբանական անձի կամ անհատի: HP–ն, այնուամենայնիվ, կարող է բացահայտել տրամադրված տեղեկատվությունը, եթե՝

- Դուք HP–ին տվել եք գրավոր համաձայնություն՝ տեղեկատվությունը սահմանափակ ժամանակահատվածում հրապարակելու հիմքով:
- HP–ին անհրաժեշտ է օգտագործել այդ տեղեկատվությունը վտարման կամ աջակցության դադարեցման դատավարության ընթացքում, օրինակ՝ ինչպես Ձեր հանդեպ չարաշահողին կամ հանցագործին վտարելը կամ ծրագրի շրջանակում նրա աջակցությունը դադարեցնելը:
- Օրենքը պահանջում է, որպեսզի HP–ին կամ սեփականատերը բացահայտեն տեղեկատվությունը:

VAWA-ն չի սահմանափակում սեփականությանը մուտք ունենալու կամ այն վերահսկելու վերաբերյալ դատարանի որոշումները կատարելու HP-ի պարտավորությունները: Դա ներառում է այն որոշումները, որոնք կայացվում են զոհին պաշտպանելու համար, ինչպես նաև այն որոշումները, որոնք վերաբերում են տնային տնտեսության անդամների միջև սեփականությունը բաժանելուն՝ այն դեպքերում երբ ընտանիքը քայքայվում է:

Պատճառներ, որոնց դեպքում VAWA Շրջանակներում Վարձակալության Իրավունքների Իրավասություն Ունեցող Բնակիչը Կարող է Վտարվել, կամ Նրան Տրամադրվող Աջակցությունը Կարող է Դադարեցվել՝

Դուք կարող եք վտարվել, և Ձեր աջակցությունը կարող է դադարեցվել վարձակալության լուրջ կամ կրկնվող չարաշահումների պատճառներով, որոնք չեն առնչվում Ձեր նկատմամբ կատարված ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման դեպքերին:

Այնուամենայնիվ, HP–ն չի կարող ավելի մեծ պահանջներ ենթադրող կանոնների ներքո պահել այն բնակիչներին, ովքեր հանդիսացել են ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման զոհ, քանի որ այն կիրառում է այն բնակիչների հանդեպ, ովքեր չեն հանդիսացել ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման զոհ:

Սույն ծանուցման մեջ նկարագրված պաշտպանությունը կարող է լինել ոչ կիրառելի, և Դուք կարող եք վտարվել կամ Ձեր աջակցությունը կարող է դադարեցվել, եթե HP–ն կարողանա ցուցադրել այն փաստը, որ Ձեզ չվտարելը կամ Ձեր աջակցությունը չդադարեցնելը իրական ֆիզիկական վտանգ կներկայացնի, որը՝

1) Տեղի կունենա անմիջապես մոտ ժամանակահատվածում, և
2) Կարող է հանգեցնել այլ բնակիչների կամ սեփականության վրա աշխատող անձանց մահվան կամ լուրջ մարմնական վնասվածքների:

Եթե HP–ն կարողանա ցուցադրել վերը նշվածը, ապա HP-ն պետք է դադարեցնի Ձեր աջակցությունը, կամ վտարի Ձեզ միայն այդ դեպքում, եթե այդ վտանգը նվազեցնելու կամ վերացնելու համար որևէ այլ գործողություններ չեն կարող ձեռնարկվել:

Այլ Օրենքներ՝

VAWA-ն չի փոխարինում Դաշնային, Նահանգային կամ տեղական որևէ այլ օրենքի, որն ավելի մեծ պաշտպանություն է ապահովում ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության կամ հետապնդման զոհի համար: Ձեզ կարող է լրացուցիչ տնային պայմանների ապահովման պաշտպանության իրավունք շնորհվել՝ ընտանեկան բռնության, ժամադրության ընթացքում բռնության, բռնաբարության, կամ հետապնդման զոհերի համար նախատեսված Դաշնային օրենքների, ինչպես նաև Նահանգային կամ տեղական օրենքների շրջանակներում:

Անհամապատասխանություն Տվյալ Ծանուցման Պահանջներին

Դուք կարող եք զեկուցել ծրագրի շրջանակում գործող բնակարանային ապահովման մատակարարի կողմից սույն իրավունքների չարաշահման մասին, և անհրաժեշտության դեպքում լրացուցիչ աջակցություն փնտրել՝ կապ հաստատելով, կամ բողոքարկում ներկայացնելով [**մուտքագրե՛ք որևէ միջնորդի կոնտակտային տվյալները, եթե կիրառելի է**] կամ [**մուտքագրե՛ք HUD-ի տեղամասային գրասենյակը**]:

Լրացուցիչ Տեղեկատվության համար՝

Դուք կարող եք դիտել HUD-ի վերջին VAWA կանոնակարգի կրկնօրինակը՝ [**մուտքագրե՛ք Դաշնային գրանցամատյանի հղումը**] հղումով:

Ի հավելումն, HP-ն պետք է Ձեզ համար հասանելի դարձնի HUD-ի VAWA կանոնակարգերը, եթե Դուք դրանք տեսնելու խնդրանք ներկայացնեք:

VAWA-ին վերաբերող հարցերի համար, խնդրում ենք կապ հաստատել [**Մուտքագրե՛ք ծրագրի կամ վարձակալության աջակցության աշխատակցի կոնտակտային տվյալները, ով կկարողանա պատասխանել VAWA-ին առնչվող հարցերին**]-ի հետ:

Բռնի հարաբերությունների առնչությամբ օգնություն ստանալու նպատակով, Դուք կարող եք զանգահարել Ընտանեկան Բռնության Ազգային Թեժ Գիծ (National Domestic Violence Hotline)՝ 1-800-799-7233 հեռախոսահամարով, կամ լսողության հետ խնդիրներ ունեցող անձանց համար՝ 1-800-787-3224 (TTY) հեռախոսահամարով:

Դուք կարող եք նաև կապ հաստատել [**Մուտքագրե՛ք համապատասխան տեղական կազմակերպության կոնտակտային տվյալները**] հետ:

Օգնություն փնտրող այն բնակիչները, ովքեր հանդիսանում կամ հանդիսացել են հետապնդման զոհ, կարող են այցելել Հետապնդման Հանցագործության Զոհերի Ազգային Կենտրոնի (National Center for Victims of Crime’s Stalking Resource Center)՝ https://www.victimsofcrime.org/our-programs/stalking-resource-center կայքէջը:

Բռնաբարության դեպքին առնչվող օգնության համար, Դուք կարող եք կապ հաստատել՝ [**Մուտքագրե՛ք համապատասխան տեղական կազմակերպության կոնտակտային տվյալները**] հետ:

Օգնություն փնտրող հետապնդման զոհերը կարող են կապ հաստատել

[Մուտքագրե՛ք համապատասխան տեղական կազմակերպության կոնտակտային տվյալները] հետ:

Կից՝ HUD-5382 Հավաստագրման ձևաթուղթ **[տվյալ ծրագրի համար հաստատված ձևաթուղթը պետք է ներառված լինի]**